ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ավագ Ավանեսյան՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ռաֆայել Գևորգյան՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ներսես Երիցյան՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

Սամվել Խանվելյան՝ ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի

կառավարման վարչության գործառնական բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Լոնդոն, 2022թ. մայիսի 24-ից 27-ը

3. Հրավիրող կողմը՝ Ջեյ Փի Մորգան:

4. Գործուղման նպատակը՝ (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցություն «Ֆիքսված եկամտի գործիքներով սահմանային շուկաներ» խորագրով անդրանիկ համաժողովին և դրա շրջանակում ոչ գործարքային իրազեկման արշավի իրականացում:

5. Քննարկված թեմաները՝ Հանդիպումների ընթացքում միջազգային կապիտալի շուկայի մասնակիցներին ներկայացվել է շնորհանդեսային նյութը, որը բաղկացած էր հետևյալ բաժիններից.

1) Նախաբան (երկրի նկարագրությունը և հիմնական շեշտադրումները),
2) Կառուցվածքային բարեփոխումները,
3) Մակրոտնտեսական քաղաքականությունը,

4) Հարկաբյուջետային շրջանակը և պետական պարտքը,
5) Արտաքին հատվածը,
6) Դրամավարկային քաղաքականությունը,
7) Բանկային համակարգը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝
Համաժողովի շրջանակներում իրականացվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբային հանդիպումներ միջազգային կապիտալի շուկայում գործող ավելի քան 30 խոշորագույն ակտիվների կառավարիչների, ներդրումային ընկերությունների ներկայացուցիչների հետ: Նաև նախատեսված էր Հայաստանին նվիրված առանձին պանելային քննարկում ներդրողների լայն շրջանակի հետ: Քննարկումներին ներկայացվել է շնորհանդեսային նյութը, այնուհետ հանդիպումներն ընթանում էին ակտիվ հարց ու պատասխանի ռեժիմով: Ներդրումային ընկերություններին հետաքրքրող հիմնական հարցերը վերաբերում էին մակրոտնտեսական և դրամավարկային ցուցանիշներին, հարկաբյուջետային և պարտքային քաղաքականությանը, բարեփոխումներին, տարածաշրջանային զարգացումներին, ռուս-ուկրաինական առկա հակամարտության ազդեցությանը Հայաստանի տնտեսության վրա: Գրեթե բոլոր ներդրումային ընկերություններն ունեին դրական ընկալում Հայաստանի և նրա վարած տնտեսական քաղաքականության վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝
Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ներդրողներին շարունակաբար տեղեկացնել Հայաստանի զարգացումների վերաբերյալ՝ թարմացված շնորհանդեսային նյութի պարբերաբար առաքման միջոցով :

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ներդրողների հետ կանոնավոր կերպով սերտ համագործակցության կարևորությունն ամրագրված է ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի <<Կապիտալի շուկայի զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N1202-Լ որոշմամբ: Այն ենթադրում է ներդրողներին ուղղված ակտիվ միջոցառումների իրականացում՝ պարբերական իրազեկման արշավների, շնորհանդեսների և այլ գործիքների միջոցով:

Համաժողովին մասնակցությամբ կապիտալի միջազգային շուկայի ներդրողների հետ հանդիպումները բարձրացրեցին Հայաստանի ճանաչելիությունը, ամրապնդեցին արտաքին շուկաների հասանելիությունը և կարող է դրական ազդեցություն ունենալ ներդրողների կողմից երկրի ռիսկի գնահատման տեսանկյունից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Պատվիրակության ղեկավար՝
Ավագ Ավանեսյան
06.06.2022թ.

Recoverable Signature

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574